

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 27

ԱՐԲԱԹԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ ենթակետի պահանջներով *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ*

1. Հաստատել Արբաթ համայնքի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները՝

Գյուղապետարան 35 անուն և 5գճ/մ 39011085 հազար դրամ արժեքով:

Մշակույթի տուն 6 անուն 43701 հազար դրամ արժեքով:

Գրադարան 5981 անուն 26800 հազար դրամ արժեքով:

2. Թույլ տալ դուրս գրել ոչ պիտնի, կոտրված արագամաշ առարկաները

Երաժշտական դպրոց 3 անուն 122650 դրամ արժեքով :

Կողմ -5

Դեմ -0

Չեմույսի 0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ՀՈՎՍԵՓ


3. ԴՈԼՄԱԶՅԱՆ ԳԱՐԻԿ


4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԱՅԻԿ ՊԵՏՈՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 26-Ն

**ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18-րդ, 19-րդ ենթակետերի և պահանջներով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով **ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնքում 2015 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում այգեգործական / ամառանոցային / տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.

բա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000դր.

բբ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000դր.

բգ) 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35 000դր.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000դր.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500դր

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500դր

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման աշխատանքների /

բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 1500 դրամ:

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա, սույն օրենքի իմաստով, այն համալվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից և ակոնոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ:

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 10 դրամ մեկ քառակուսի մետրի համար:

բ) Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 դրամ:

գ) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 40 000 դրամ:

գա) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կամակերպման և իրացման դեպքում 6000 դրամ

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/ խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) Առևտրի օբյեկտների համար 25 000 դրամ

բ) Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000 դրամ

գ) Բաղնիքների և սաունաների համար 200 000 դրամ

դ) Խաղատների կազմակերպման համար 500 000 դրամ

ե) Շահումով խաղերի կազմակերպման համար 250 000 դրամ

զ) Վիճակախաղերի կազմակերպման համար 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել.

ա) ալկոհոլային

սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1500 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ:

գ) այլ արտաքին գովազդի համար 1000 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ:

9. Համայնքի

տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն

իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10 000 դրամ:

10. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը գյուղական այլ համայնքներում հաշվարկվում են 0.5 գործակիցների կիրառմամբ:

Տեղական վճարներ

ա) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող

վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5 000 դրամ:

բ) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 դրամ:

գ) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 3 000 դրամ:

դ) Աղբահանության համար սահմանել դրույքաչափ 1 անձի համար 10 դրամ:

ե) Սպասարկում իրականացնող ընկերությունների համար 100 դրամ:

զ) Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

Կողմ -5

Դեմ -0

Չեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՄ

2. ԳԱԼՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ


3. ԴՈՒՄԱԶՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 25-Ն

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով **ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**՝

Հաստատել Արբաթի գյուղապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանել՝

1. Աշխատակազմի քարտուղար 1 դրույք 180000 հղ,
2. Գլխավոր մասնագետ 1 դրույք 175000 հղ,
3. Առաջատար մասնագետ 1 դրույք 150000 հղ
4. Առաջին կարգի մասնագետ 1 դրույք 149000 հղ
5. Երկրորդ կարգի մասնագետ 1 դրույք 148000 հղ
6. Ղեկավարի տեղակալ 1 դրույք 150000 հղ
7. Հավաքարար 1 դրույք 66500 հղ

Մշակութի տուն՝

8. Կուլտուրայի տան տնօրեն 1 դրույք 100000 հղ
9. Գեղմասվար 1 դրույք 66500 հղ
10. Գրադարանավար 1 դրույք 66500 հղ
11. Հավաքարար 1 դրույք 66500 հղ

Երաժշտական դպրոց՝

1. Տնօրեն 1 դրույք 90000 հղ
2. Հաշվապահ 1 դրույք 84000 հղ
3. Դաշնամուրի, ջութակի ավտի դասատու 2 դրույք 70000 հղ
4. Քանոնի դասատու 1,5 դրույք 70000 հղ
5. Շվիիբլուլի դասատու 1,5 դրույք 70822 հղ
6. Ակորդիոն, կիթառ, դաշնամուր լարող 1,5 դրույք 70000 հղ

7. Կիրթառի 1 դրույք 70000 հդ
8. Տեղականի դասատու 1,5 դրույք 70822 հդ
9. Հավաքարար 1 դրույք 66500 հդ

Կողմ -5

Դեմ -0

Չեղծակալի -0

1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՍ

2. ԳԱԼՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ


3. ԴՈԼՄԱԶՅԱՆ ԳԱՐԻԿ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արբաթ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արբաթ, (093) 90-98-99, www.arbathamaynq.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 24-Ն

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԶՍՓՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ






Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով **ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ**՝

Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել 250000 հդ:


Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

- 1. ԱՄԻՐՅԱՆ ՔՅԱՐԱՍ 
- 2. ԳԱԼՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ 
- 3. ԴՈԼՄԱԶՅԱՆ ԳԱՐԻԿ 
- 4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ 
- 5. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ԱՐԱՅԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ 